Զաթակ[1] *բերդի մօտ։ Բարդուղ չայն ապա ընդունում է* Փերթուզ[2] (*Պարտէզ*) *առուակը, որ բղխում է* Աքուսար *լճ–ից ընդունելով* Գոթիք *առուն։* Ագրակ *առուակը սկսում է* Կերասի (*Ճակիս*), Քիրազլի (*Կերասի*) *լ–րից, անցնում է* Աշիտ–Գոմ, Ագրակ *գեղերը, միանում է* Փենեքի *ջրին, Կոնձորի բերանից երկու կիլոմետր ցած։*

Փենեքի (*բանակ*) *ջուրն սկսում է* Կարճկան *լեռներից, անցնում է* Ակչա–Կալա,

---

1 *Զաթակ գեղ մ. եւ փ. Զաթախ բերդ, մացրա, ձմեռոց կայ միեւնոյն գաւառի մէջ իրարից 5—10 կիլոմետր հեռաւորութեան վրայ։ Այս բառը յատուկ բացատրելու կարիք ունի, քանի որ մեծ աւանների հետ կապ ունի։*

2 *Փերթուզ (պարտիզաց փոր) գեղը շինուած է մի մեծ աւանի կամ ոստանի տեղը, ոչ միայն մեծ տաճար ունի, հին բերդերի, աշտարակների հիմունքը 1—2 մետր բարձրութեամբ պատեր ունին, այլ դղեակների եւ ապարանքների թումբերը պեղելու կարիք կայ։ Թէեւ Փերթուզը շատերը պարտէզ են թարգմանում, բայց ես կարծում եմ որ Պարթեւնոց է։ Երեւում է, որ եղել է ոստան կամ ոստանիկների եւ սեպուհների բնակարան։ Այս Փերթուզի շուրջը, Կորթեա եայլայում, Կոտիկ ձմեռոցում, Կոտիկ լճակի մօտ, Կոտիկ աւերակներում, Օրուկ գեղում, ձմեռոցում, Օրուկ եայլայում, Սրտաձորում, Կոկեր աւերակներում, Կզնարում, Փօսիքում, Էգրիսում, Մթնդերում եւ Ոդուլերում այնքան տաճարների եւ դղեակների աւերակներ կան, որ ցոյց են տալիս թէ, ինչ որ նշանաւոր անձնաւորութիւն ապրել է Պարթուզի կենդրոնում, որի շուրջը 5—10 կիլոմետր հեռաւորութեան մէջ, կամ Պարթուզից կարկինով քաշուած մի շրջանակի մէջ ընդամէնը 10 կիլոմետր տրամագծով ապրել են 20-ի չափ սեպուհներ կամ իշխաններ շրջապատած այս կենդրոնը։ Այս Պարթուզի առուակը գալիս է Արուսար լ-րից շրջապատուած է բազմաթիւ մանր լճակներով, որոնք Ջիարէթ-Ջուհուրաթներ են համարում ժողովրդից։*